# ԵՐՐՈՐԴՄԱՍՑՈՒ ԿԵՐՊԱՐԻ
# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
# ԸՍՏ ՀՈՖՍԹԵԴԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ



## 1

### ՈՐՔԱՆՈՎ Է ՄԵԾ ԿԱՄ ՓՈՔՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Երրորդմասցիներին բնորոշ է իշխանության մեծ հեռավորության ուժը; ընտանիքում առկա է հիերարխիա, կարևորը հոր խոսքն է:
Աշխատանքային ոլորտում չկա հավասար շփում վերադասի և ստորադասի միջև, աշխատանքը իրականացվում է հիմնականում վախի կամ կախվածության միջոցով, որն էլ առաջ է բերում լարվածություն և խանդավառության բացակայություն աշխատավայրում:

### ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՄ ԸՆԴՈՒՆԵԼԸ

## 2

Երրորդմասցիները, ապրելով անորոշությունից խուսափելու սկզբունքով, փակ են ցանկացած նոր կամ տարբեր իրավիճակի առջև, եթե տարբեր է՝ ոչ հոգեհարազատ, ապա սխալ է, հենց այդ նորությունից վախենալու զգացումն է, որ առաջ է բերել նրանց շրջապատում այդքան շատ կանոններ, ինչպես նաև «ճիշտը մի հատ ա» սկզբունքը:
Երրորդմասցիների շրջանում շատ են թաղային հեղինակություն վայելող անհատները, ովքեր հետևում են, որ մեծամասնությունը հենց այդ արիեստականորեն որդեգրած ճշտով շարժվի:




### ԱՆՀԱՏՆԵՐԻ ԿԱՄ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## 3

Երրորդմասցիները պատկանում են կոլեկտիվ հասարակությանը. այստեղ խրախուսվում են բազմանդամ ընտանիքները և ընտանիքի անդամների ուժեղ կապը, խնդիրները լուծում են ընտանիքի անդամների կամ բարեկամների միջոցով: Օգտագործում են «մենք» դերանունը «ես»-ի փոխարեն, մեծ խմբերով բակային կռվի են դուրս գալիս, թաղերով «հարցեր լուծում»:
Ունենալով շատ ջերմ բակային մշակույթ՝ միմյանց շատ են վստահում, նախկինում նույնիսկ դռները չեն փակել քնելիս: Դրա հետ մեկտեղ նեղացկոտ են, խռովություն պահող՝ ամենը անձնապես ընդունելու պատճառով:



### ԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ԿԱՆԱՑԻՈՒԹՅՈՒՆ

## 4

Երրորդմասցիները պատկանում են արական հասարակությանը. մարդիկ շատ սահմանափակ ու զուսպ են իրենց էմոցիաները արտահայտելու մեջ: Քիչ են ժպտում, միշտ մտազբաղ են և խոժոռված: Կանայք սահմանափակված են, չեն կարող անծանոթների հետ խոսել: Տղամարդկանց բնորոշ չէ լաց լինելը: Կարևոր է շատ տղա զավակ ունենալը:



### ԿԵՆՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ՝ ՀԵՌԱՏԵՍ և ԿԱՐՃԱՏԵՍ

## 5

Երրորդմասցիներն ավելի կարճատես մտածելակերպ ունեն. ապրում են հիմնականում ներկայով, բայց միշտ անցյալից կառչած. չունեն հեռահար նպատակներ ապագայի հետ կապված: Ավանդապահ են, սրբացնում են տան մեծին և նրա խոսքը: Չեն սիրում սովորել կամ մյուս մշակույթներին ծանոթանալ, կարծում են, որ իրենք փոխազդեցության կարիք չունեն, իրենց շատ լավն են համարում, ինքնավստահ են և մեծամիտ:



### ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

## 6

Երրորդմասցիներն ավելի հարում են զսպվածության ցուցիչին, քանի որ էմոցիաները քիչ են արտահայտում, ավելի դանդաղ, ծանր և ալարկոտ են քայլում: Մտքում կարծես միշտ հետևում են «քեզ ծանր պահի» սկզբունքին: Բայց միևնույն ժամանակ պարապուրդի մասնված այս տղամարդիկ ունեն բացառիկ մի հատկություն. այն է՝ փոխօգնությունն ու հոգատարությունը: Բավական է բակով անցնող որևէ անծանոթ մեքենա կամ տաքսի անսարքության պատճառով խնդիրներ ունենա, արդեն բակի սևավորված ապետները շտապում են օգնության:



**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.** Երրորդմասցիներին բնորոշ է հիերարխիկ դասակարգումը, նորամուծությունից խուսափելը, առնական մտածողությունը: Երրորդմասցիները պատկանում են կոլեկտիվ մտածելակերպ կրող մշակույթի, զուսպ են և անցյալակենտրոն:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.** Լարիսա Մկրտչյան/Անուշ Վարդանյան
**«ԿԱԶԱ»** հիմնադրամի **«Զբոսավարների պատրաստում»** դասընթաց, 2016